ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Ստեղծարար աքսելերացիոն ծրագիր (ՍԱԾ)

Իրականացման ժամանակահատված: 01.04.2022 - 01.04.2025

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 3 000 000

Ընդհանուր բյուջե: € 3 750 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

AGBU Fund Armenia

Նախագծի նկարագրություն:

Ստեղծարար աքսելերացիոն ծրագիրը (ՍԱԾ) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ, հիմնական դիմորդ) և Ստեղծարար Հայաստանի (ՍՀ, համադիմորդ) համագործակցությամբ համատեղ կազմված ծրագիր է, որը նպատակ ունի աջակցել Հայաստանի մշակութային և ստեղծարար արդյունաբերության (ՄՍԱ) էկոհամակարգի, ստեղծարար անհատների և ներգրավված գործիչների ու կառույցների զարգացմանը՝ նպաստելով Հայաստանում զարգացող ստեղծարար տնտեսությանը: Ծրագիրը որդեգրել է համապարփակ ցիկլային մոտեցում՝ սկսած ստեղծարար գաղափարների ձևավորումից մինչև իրականացում և տարածում շուկայում:

Ըստ այդմ, ծրագիրը միտված է բացահայտելու գիտելիքի և հմտությունների պակասի հետևանքով ոլորտում առաջացած խնդիրները ոչ միայն ստեղծարար մասնագետների, այլև գործող աջակցության ծառայությունների, կառույցների և ենթակառուցվածքների շրջանում: Ծրագիրը ընդգրկում է հինգ հիմնական բաղադրիչ. 1) Ինկուբացիա և աքսելերացիա ստեղծարար անհատների համար (Արտբոքս մշակութային ինկուբատոր), 2) Օժանդակություն ստեղծարար ոլորտին աջակցող միավորներին (ՄՍԱ իրազեկման արշավներ և դասընթացների շարք ՄՍԱ-ին առնչվող ծառայությունները խրախուսելու համար), 3) ՄՍԱ ներկայացման միջոցառումներ (ելույթների շարքեր, արտադրանքի իրացման միջոցառումներ, զլմ-ների հետ կապ և այլ միջոցառումներ ուղղված հայկական ՄՍԱ-ի առաջխաղացմանը և համաշխարհային շուկա դուրս գալու հնարավորությունների բարելավմանը),

Ակնկալվող արդյունքներ:

1) Զգալիորեն բարելավված բիզնես կառավարման և ձեռնարկատիրական կարողություններ (թիրախ - 125 ստեղծարար մասնագետներ և 10 մշակութային կառույցներ)
2) Աջակցող ճյուղերի շրջանում ՄՍԱ-ի ընդհանուր բարելավված իրազեկվածություն միջճյուղային փոխգործակցության և հանրային-մասնավոր երկխոսության միջոցառումների միջոցով (թիրախ - 28 հանրային-մասնավոր երկխոսության միջոցառում, 900 մասնակից)
3) ՄՍԱ գործիչների և նրանց արտադրանքի բարելավված լուսաբանում միջազգային և տեղական լրատվականների կողմից (թիրախ - 100 ՄՍԱ ազդեցիկ գործիչների կողմից 25 առցանց ելույթներ և 60 լրատվական հրապարակումներ)
4) Նոր թվային գործիք հայկական ՄՍԱ խորհրդի և հարթակի միջոցով ոլորտում ներքին կապեր ստեղծելու և նրանց աջակցելու համար (թիրախ - 1 հուսալի գործիք և թվով 6 օրենքի/կարգավորման/փոփոխության նախագիծ նախքան ծրագրի ավարտը)
5) Սարքավորումների և ենթակառուցվածքային ներդրումների միջոցով ավելի որակյալ տարածքների և գործիքների հասանելիություն ստեղծարար գործիչների և մշակութային կառույցների համար (թիրախ - 1 Ֆաբլաբ ստեղծարարների համար, 3 ստեղծարար հանգույց, 3 նորարարական դրամաշնորհի հաղթող):